Յակոբեան Ալեքսան
ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ

Բուն Աղուանքի քաղաքները եւ գետերը ըստ Կլաւդիոս Պտղոմէոսի եւ Է դարի Աշխարհացոյցի

Իր կեանքի գլխաւոր երկը գրելիս Բ դարի յոյն նշանաւոր աշխարհագէտ Կլաւդիոս Պտղոմէոսը[1], ըստ ամենայնի՝ ծանրակշիռ սկզբնաղբիւրներ է ունեցել Ալբանիա (Աղուանք) երկրի տեղանունների մասին: Դա երեւում է ե՛ւ հարեւան Իբերիայի հետ համեմատելիս (որի բնակավայրերի թիւը հեղինակի մօտ եռակի պակաս է՝ 9), ե՛ւ Մեծ Հայքի (որտեղ դրանց թիւն ընդամենը 2,8 անգամ է աւելի՝ 85, թէպէտ երկիրը մեծ էր շուրջ 5 անգամ): Ալբանիայի բնակավայրերի համադրման փորձերն սկսւում են ԺԸ դարից եւ շարունակւում մինչ այսօր: Վերջին փորձերը, օր.՝ վրաց-աղուանական կրկնագիրը հրատարակողներինը (Յ. Գիպերտ, Վ. Շուլցէ, Զ. Ալեքսիձէ եւ Ժ.-Պ. Մահէ, 2008), յենւում են Ս. Մուրաւեւի մօտեցումների վրայ, ով առաւելապէս խորացել էր Կասպից ծովի տրանսգրեսիայի խնդիրներում, ինչպէս նաեւ Ռ. Հիւսընի, ով 2002 թ. հրատարակեց Է դարի Աշխարհացոյցի մանրամասն ծանօթագրուած անգլերէն թարգմանութիւնը[2]: Դրանք բոլորն էլ մեծ սխալներով են:

Պտղոմէոսեան քաղաքների յաջող համադրման խնդրում բարդութիւնն անտիկ Ալբանիայի թագաւորութեան հիւսիս-արեւելեան սահմանակէտի ճշտումն է: Ուսումնասիրողներից ոմանք (այդ թւում՝ յիշատակուած Ս. Մուրաւեւը եւ Ռ. Հիւսընը) սահմանափակում են այդ կողմի սահմանագիծը Աղսու գետով ու Լեանգեաբիզի լեռնաշարով (Շամախիից արեւմուտք), կամ ամենաշատը տարածում են մինչեւ Ապշերոն[3]: Մի այլ խումբ գիտնականներ (օր.՝ Ս. Եուշկովը[4]) հասցնում է այդ սահմանը

---

[1] **Ptolemaei Claudii** Geographia, Ed. **C. Müller**, Parisiis, 1901; **Klaudios Ptolemaios**, Handbuch der Geographie, Griechisch – Deutsch, Herausgegeben von **A. Stückelberger** und **G. Grasshoff**, Basel, 2006.

[2] **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании и уровень Каспия, – ВДИ, 1983, № 1, с. 117-147; The Geography of **Ananias of Širak** (Ašxarhacʿoyc). The Long and the Short Recensions. Introduction, Translation and Commentary by **R. H. Hewsen**, Wiesbaden, 1992; **R. H. Hewsen**, Armenia: A Historical Atlas, Chicago-London, 2001.

[3] Տե՛ս, օր.՝ **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Եր., 2006:

[4] **С. В. Юшков**, К вопросу о границах древней Албании, – ИЗ, 1937, № 1, с. 129-148.

բաւականին հեռու հիւսիս՝ Միջին Դաղստան: 1987 թ. մեզ, թւում է, թէ յաջողուեց ճշգրիտ որոշել այդ հիւսիս-արեւելեան սահմանակէտը՝ նկատելով Ա դ. հռոմէացի նշանաւոր պատմիչ Կոռնելիոս Տակիտոսի կարեւոր վկայութիւնը («Աննալներ», VI, 33), որը սահմանը տանում է հէնց Դերբենդի անցքով, կոչելով այն «լեռնանցք Ալբանիայի լեռների ծայրի ու ծովի միջեւ»[1]: Աւելին, հնարաւոր եղաւ ենթադրել, որ դեռ Ք. ա. Գ դարում աղուանների բնակութեան սահմանը համարուել է նոյն Դերբենդը: Գիտենք, որ Սելեւկեան առաջին արքայի հրամանով Կասպից ծովի ափագծի հետազօտութիւնը կատարած Պատրոկլէս զօրավարը (Գ դ. սկզբում) եւ նրանից օգտուած աշխարհագէտ Էրատոսթենէսը (դարի վերջում) արձանագրել են աղուանների բնակուելը Կասպիցի ափին կղուս-կատիշներից հիւսիս: Ընդ որում՝ Ստրաբոնի եւ Պլինիոս Աւագի մօտ պահպանուած տուեալների համադրմամբ՝ Պատրոկլէսի եւ Էրատոսթենէսի մօտ կաղուսական ափի երկարութիւնը ստացւում է 5000 ստադիոն, իսկ «ալբանական» ափինը՝ 300 կամ 400: Սակայն թե՛ անտիկ, թե՛ միջնադարեան աղբիւրների վկայութիւններով՝ կաղուսները զբաղեցրել են Կասպից ափաշերտի լոկ մի փոքր կտորը՝ Կուր եւ Արաքս գետերից հարաւ եւ այն հարաւ-կասպիական իրանական ցեղերից հիւսիս-արեւմուտք, ում յանուանէ նշում են զոյգ հեղինակները նոյն դրուագներում: Դա ենթադրել է տալիս, որ Ստրաբոնին ու Պլինիոսին հասել է Պատրոկլէսի հաշուետուութեան (Պերիպլուսի) մի աղճատուած տարբերակ (գուցէ՝ Էրատոսթենէսի երկում կամ դրա մի արտագրութեան մէջ), ուր աղուանական եւ կաղուսական ափակտորների չափերի չփոթ է սպրդել՝ փոխատեղման ձեւով. իսկ իրականում Պատրոկլէսն աղուանական ափի համար արձանագրած է եղել շուրջ 5000 ստադիոն ձգուածութիւն (300/400 ստադիոնն էլ՝ կաղուսական ափի համար): Դա մօտաւորապէս համապատասխանում է աւելի ուշ առաջացած Աղուանից թագաւորութեան ափագծի ձգուածութեանը (Կուրի գետաբերանից – Դերբենդ), առաւել եւս որ գրեթէ նոյն իրական երկարութիւնն ունեցող հարաւ-կասպիական իրանական ժողովուրդների՝ Վրկան-Հիւրկանիայի ափագիծը Պատրոկլէսի մօտ նոյնքան է՝ 4800 կամ 4900 ստադիոն:

Աղուանքի պտղոմէոսեան բնակավայրերին մեր անդրադարձը կապուած էր 2 տարի առաջ Է դ. Աշխարհացոյցի գիտա-քննական բնագիրը կազմելու աշխատանքների հետ: Պարզուեց, որ ուշադիր քննութեան դէպքում լիովին հնարաւոր է ճշգրիտ որոշել Պտղոմէոսի, Ստրաբոնի, Պլինիոս Աւագի եւ Աշխարհացոյցի նշած գետերի փաստարկուած համադրութիւնները, որի հիման վրայ էլ՝ արդէն նաեւ բնակավայրերինը:

---

[1] **А. А. Акопян**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, с. 35-36.

Պտղոմէոսը թուարկում է Աղուանքի 29 կամ 30 բնակավայր (տալով իրենց կոորդինատները), ընդ որում՝ 5 հատուած-սեկտորների մէջ: Վերջիններիս սահմանները հեղինակի թուարկած գետերն են, որոնց մի մասը թափւում է ծով (Սոանա, Գերրոս, Կասիոս եւ Ալբանոս), միւս մասը՝ Կուր գետը (Ալազոնիոս-Ալազան՝ Իբերիա-Վիրքի սահմանին, եւ այն վտակը, որ «Կովկասից հոսում է դէպի Կուր»): Այս 6 գետերի յաջող տեղորոշումից, որ կապուած է հիւսիս-արեւելեան սահմանակէտի ճշման հետ, բխում է նաեւ բնակավայրերի հաւաստի տեղորոշումը:

Արդ, ստացւում է, որ Պտղոմէոսի մօտ Սարմատիայի հետ սահմանակցող Սոանա *գետը (Աշխարհացոյցում՝* Սւանաս*) համապատասխանում է Ռուբասին, որը հոսում է Դերբենդի մօտ ծովին հասնող* Ջալգան *լեռնաշղթային*[1] *հարաւից զուգահեռ: Սոանայից հարաւ-արեւմուտք են յիշւում 2 քաղաքներ, որ բաւական մօտիկ համադրումներ ունեն: Առաջինը՝* Թելայբան*, կա՛մ վերականգնւում է* Գելայբա *եւ համադրւում Ռուբասից հարաւ գտնուող* Ագլաբի *աւանի հետ, կա՛մ էլ մի առանց վերականգնման տարբերակով նոյնացւում է Խաչմաս քաղաքի մօտ գտնուող յայտնի հայաբնակ* Թալաբի *գիւղի հետ*[2]*: Երկրորդը՝* Թիլիբիսը*, վերականգնւում է* Բիլիտիս *եւ համադրւում* Բելիջի *աւանի հետ, որի տեղում դեռ 1987-ին ենթադրել ենք Զ դարի* Բաղախատ-Բաղասատ *եպիսկոպոսանիստը (Զողին մօտ, ինչպէս երեւում է Մովսէս Դասխուրանցու եւ «Գիրք թղթոցի» ցուցակի ակնառու հերթականութիւնից):*

Պտղոմէոսի երկրորդ գետը՝ Գերրոսը*, թերեւս՝ այս տարածքում ամենից նկատելի Սամուրն է (բայց, գուցէ եւ՝* Վելվելին*): Նրանից հարաւ յիշատակուած են 3 քաղաքներ: Առաջինը՝* Թիաունան*, վերականգնելի է թւում* Թ*ռ*ռաունա*, որ համապատասխանում է միջնադարեան* Սապո-*թրեն* *քաղաքին, այսինքն՝ մասքաթեան* Շապորա *– Շաբրանին (ըստ Ս. Երեմեանի): Երկրորդի՝* Թաբիլակայի *հաւանական համադրութիւնը (էլի՝ իր կէսով) Շահդաղեան լեզուներով խօսող լեռնային գիւղերից մէկի անուան հետ է՝* Ալիկի*: Երրորդը՝* Գելդան*, թերեւս, համադրելի է այդ շրջանում հոսող* Գիլգիլչայ *գետանուան հետ (Խորվէմ պարսպի մօտ):*

Պտղոմէոսի՝ ծով թափւող երրորդ գետը Կասիոս-Կայսիոսն *է, որի ճիշտ համադրումը* Ջեյրանկեչմեզի *հետ է՝ ակունքը Շամախիի հարաւակողմում, որից էլ քիչ հիւսիս անցնում էր տարածքի ամենայարմար՝ Խալդանի լեռնանցքը՝ հին Վարդեգրուակ-Վարդեդրուակը (արդեօ՞ք՝*

---

[1] Ըստ Ա. Կուդրեաւցեւի եւ Մ. Գաջիեւի՝ *Ջալգան*-ը հմմ. *Զող – Զոր –Զոլա* տեղանուան հետ, որ աղուաներէն տարբերակն է իրան. *Դերբենդ*-ի՝ իր հզօր պարսպով:

[2] Այս դէպքում պիտի ենթադրել շփոթ ըստ սեկտորների, կամ էլ՝ յաջորդ *Գերրոսը* պիտի լինէր ոչ թէ Սամուրը, այլ աւելի հարաւ հոսող գետ, օր.՝ *Վելվելին*: Թերեւս՝ նոյն Թալաբի գիւղն է նաեւ Ժ դ. արաբ աշխարհագէտ ալ-Մուկադդասիի *Թեբլան*:

գրուակ < գեդուկ – *«լեռնանցք»): Այս գետից մինչեւ* Ալբանոս *գետը (=Տուրիան) ընկած սեկտորում յիշւում են. Ալամոսը, որ, թերեւս, արդի* Ալեատ *աւանն է; Խալախան (var.* Խադախա*)՝ ըստ ամենայնի՝ միջնադարեան* Քաղաձոր *գաւառի կենտրոնը;* Խոբօտան *(var.* Խոբատա*), որ կա՛մ Կովկասի հիւսիսային եւ հարաւային լանջերի մի քանի գիւղերում ապրող լեզգիալեզու* Խապուտ *փոքր ժողովրդի անունով մի աւան էր*[1]*, կա՛մ էլ, թերեւս՝* Կոբուատանը*;* Միսիան*, որ դրափոխուած* Իսմիա *տարբերակով համադրելի է խեղուած* Իսմայիլի *քաղաքանուան հետ;* Մոզիատան*, որ վերականգնելի է թւում* Մոզիատա*՝ յիշեցնելով Մովսէս Դասխուրանցու* Հոշաչա *տեղանունը, անշուշտ՝ համադրելի* Հոշաւանդ *բլրանուան հետ (Գեօքչայից քիչ արեւելք);* Խաբալան *(var.* Խալաբա*), որի համապատասխանութեանը մայրաքաղաք* Կաբալա-Կաբալակա-Կապաղակին *որեւէ մասնագէտ չի կասկածել: Ծովափնեայ* Ալբանոս *քաղաքն էլ պիտի փնտրել, թերեւս, խեղեալ Ալիբազրամլիի մօտ (ուշ* Լփնա*ց* քաղաքը*՝ իբրեւ վարկածային տարբերակ՝ ծովափից շատ էր հեռու):*

Եւ միայն չորրորդ գետը՝ Ալբանոսն *է, որ, ըստ մեզ, համապատասխանելով Տուրիանին (Կապաղակից քիչ արեւմուտք)՝ այսօր թափւում է Կուր, այնինչ ըստ Պտղոմէոսի՝ ծով էր հոսում: Թէպէտ, հաշուի առնելով խիստ հարթ դաշտի լանդշաֆտը, լիովին ենթադրելի է, որ ժամանակին Տուրիանը ստորին հոսանքում մինչեւ ծով է հոսել՝ Կուրին հիւսիսից զուգահեռ եւ հէնց ներկայ Կուրի հունով (իսկ Կուրն էլ հոսել է քիչ հարաւ ընկած Սարիսու ճահճալճերի հունով)*[2]*: Շատ կարեւոր է նաեւ Ստրաբոնի* Սանդոբանէս *գետանուան մեր ընկալումը՝ որպէս* Սանի *(ըստ Աշխարհացոյցի) եւ* *Լոբանէս *(փխն.* *Դոբանէսի*. յուն. Δ եւ Λ տառերը նման են) գետանունների վրիպեալ միախառնում, ընդ որում՝* Լոբանէսը *համադրելով Պտղոմէոսի* Ալբանոսի *հետ: Այժմ դժուար չէ տեսնել, որ հեղինակի՝ Կովկասից հոսող գետը Ալազանի ստորին հոսանքն է եւ իր Կուրմուխ վտակը (Կախիով անցնող), որն Ալազանի հետ ուղիղ՝ հիւսիս – հարաւ գիծ է կազմում: Տուրիան-Ալբանոսի եւ դրա միջեւ ընկած սեկտորի քաղաքներ էին.* Օսիկան *(var.* Օսսիկա*), որ բոլոր մասնագէտները համադրում են* Ծաքիի *հետ;* Եբլայան *(var.* Եմբոլայա*), որ, իրօք, թերեւս՝ ներկայիս* Ելլախ *աջափնեայ քաղաքի հինաւուրց ձախափնեայ*

---

[1] Հմմ. **М. Т. Пашаева**, К этнической истории «шахдагских народов», – Albania Caucasica, Вып. I, Отв. редакторы: **А. К. Аликберов, М. С. Гаджиев**, Москва, 2015, с. 151.

[2] Սակայն ծով թափուելու մասին պնդումը նաեւ կարող է գրիչների մի վրիպում համարուել: Դա է յուշում այն փաստը, որ Կասպից ծովը նկարագրելիս Պտղոմէոսին յանգող Աշխարհացոյցը Կուրից հիւսիս յիշում է լոկ 3 գետ՝ *Կէտոս*, *Գեռաս* եւ *Սուանա՝* առանց Ալբանոսի: Սա եթէ գրչական վրիպում չէ, ապա մէկն է այն օրինակներից, երբ մեր աղբիւրը թոյլ է տալիս սրբագրել յոյն աշխարհագէտի բնագիրը:

թաղամասն է; Իունան, *որ, անշուշտ, ներկայիս* Ջունուտն *է;* Իոռուլան *(վերականգնուած՝* Իոբուլայից. *յուն.* Բ > Ռ*), որ ըստ ամենայնի՝* Ջողոլուն *է;* Մոսեգան, *որ, թերեւս՝ Տուրիանի վերնահովտի* Միչիխն *է;* Մամեխիան *(var.* Կամեխիա*), որ* Մամրուխն *է կամ, գուցէ՝ իր բազիլիկայով յայտնի* Կումը *(լեզգիազգի պոէտ Նիզամիի ծննդավայրը);* Սիոդան, *որ, թերեւս՝ հայկ. գրչօջախ* Սեօիւտլուն *է (Նիժից քիչ հարաւ), կամ՝ Մինգեչաուրի ձախափնեայ քաղաքամաս Սուդա*գիլանը*;* Ադիաբլա-Ալիաբլան, *որ, գուցէ՝ խեղուած* Ալիբեյլին *է;* Աբդիալա-Աբլանան, *որ, գուցէ՝ խեղուած* Աբդալին *է: Երկիցս յիշուած ծովափնեայ Գահիտ*արա *(var.* Գա*ձգ*արա*) քաղաքն էլ պիտի փնտրել հետագայ* Ջաւատի *մօտ (ոչ հեռու՝ Ջաֆարխան անտիկ հնավայրով), այլ ոչ թէ ծովից շատ հեռու Մին*գեչաուր*ում:*

*Ստրաբոնի՝ արեւմուտքից արեւելք թուարկած Աղուանքի գետերի համար (*Ալազոնիոս, Սանդոբանէս, Ռոյտակէս *եւ* Խանէս*) նշելի է, որ չպէտք է դրանք անպայման կապել Պտղոմէոսի գետերի հետ, այլ պիտի ընդունել, որ խօսքը տարբեր գետերի մասին է: Աշխարհացոյցն* Ա-ղուան-Ալազանից *յետոյ թուարկում է Կովկասից իջնող* Գեգաւու, *ապա* Սանի *եւ* Սեբոջ *գետերը, որից յետոյ բնագիրը ցաւալիօրէն խաթարվում է 1604 թ. գրչի խիստ անփութութեան պատճառով, ով այդ հատուածում վրիպել է «ռեկորդային» 2-3 պարբերութիւն (մինչեւ Մեծ Հայքի նկարագրութեան սկզբները)*[1]*: Նրա* Գեգաւու *գետի հետ, որ Ալազանի ամենաարեւելեան Աղրիչայ վտակն է, կարող է զուգորդուել նոյն աղբիւրի* Գըլգաւ *քաղաքանունը (Դասխուրանցու երկում՝* Գայլեգոճ *?!)*[2]*:* Սանին *էլ համադրելի է Կուրի Ալիջան վտակի հետ (նաեւ՝ Ալջիգան), իսկ* Սեբոջը*՝ Տուրիանի, որը, կրկնենք՝ Ստրաբոնի* Լոբանէան *է եւ Պտղոմէոսի* Ալբանոս*ը: Այդու՝ Կուրի Գեօքչայ-Կոկիսոն վտակի հետ համադրելի է դառնում Ստրաբոնի* Ռոյտակէս*ը (գուցէ՝ հմմ.* Ռուշանաշէն *հայկ. գիւղը?), Գիրդիմանի, Աղսուի կամ Փիրսահաթի հետ էլ՝* Խանէս*ը (սրանից վերականգնուած* Խալէս *ձեւի հետ հմմ.* Խալախա – Քաղաձորը*):*

Վերջապէս, Պտղոմէոսի ամենաարեւմտեան սեկտորում բաւական լաւ են տեղորոշւում. Դեգլանէն*, որ վերականգնվելով* Լեգլանէ *(յուն.* Δ – Λ*)՝ կապւում է* Լեքիթի *հետ (իր յայտնի զուարթնոցատիպ տաճարով);* Սանուան*, որ վերականգնվելով* Սարուա *(յուն.* Ν – Ρ *եւս նման են)՝ հա-*

---

[1] Տե՛ս **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, Գիտա-քննական բնագիր **Ա. Ցակոբեանի**, – ՀԱ, ՃԻԷ տարի, Վիեննա-Եր., 2013, սն. 35-194:

[2] Տեղին նշենք, որ ինչպէս պարզ է դառնում Աշխարհացոյցից Ղեւոնդ վարդապետի քաղաձոյի շնորհիւ, ով Բուն Աղուանքի գաւառները թուարկում է հակառակ ուղղութեամբ, անհրաժեշտ է Գեգաւու գաւառը տեղորոշել դէպի Կովկաս, իսկ Հողմազ գաւառը Կուրին մօտ՝ Կամբեճանին հարեւան (Ս. Երեմեանը, Բ. Ցարութիւնեանը եւ Ռ. Հիւսընը շտապողաբար արել են հակառակը):

մադրելի է Ճարի *հետ; Բակխիան (var.* Բակրիա*), որ կարող էր լինել* Բիխ – Բէխ *գաւառի կենտրոնը, իսկ* Տագոդան *բոլորի համոզմամբ՝ վերականգնելի է* Լագոդա*, որից եւ՝ արդի* Լագոդեխին*: Այստեղ յիշուած* Նիգան *(var.* Նէգա*), գուցէ, կարող էր լինել հարեւան սեկտորի նշանաւոր* Նիժը*, իսկ այնտեղի* Բարուկան*, որ համադրում են* Վարդաշէնի *հետ, մի հակադարձ շփոթով կարող էր լինել այս սեկտորի* Բելուկանը*:*

ԱՂՈՒԱՆՔԸ (Ք.ա. III դ. վերջ - Ք.հ. III դ.)
46°
48°
50°
42°
40°
Վիրքի քաղաքորդության հյուսիսային և արեւմտյան սահմանները Ք.ա. III-I և Ք.հ. III դարում
Վիրքի քաղաքորդության հարաւային սահմանը Ք.հ. I - II դդ.
Մեծ Հայքի քաղաքորդության հյուսիսային և արեւելյան սահմանները Ք.ա. III - Ք.հ. III դ.
Մեծ Հայքի քաղաքորդության հյուսիս-արեւմտյան սահմանները Արդաշես Ա-ի օրոք (Ք.ա. 189-160 թթ.)
Միհրդատ Զ Եփատորի օրոք (Ք.ա. III - 63 թթ.) Պոնտոսի քաղաքորդության և Ք.հ. II - III դդ. Լաբիկայի քաղաքորդության հյուսիս-արեւելյան սահմանները
Ալուանից քաղաքորդության սահմանները Ք.ա. I - Ք.հ. III դդ.
Վիրքի քաղաքորդության կորուստ Ք.հ. I դարում զրաւված Կասպիանի (Խաչբուանեն) և հարակից գաւառների գրաւաքը
Ալուանից և Մսարքից քաղաքորդությունների սահմանները Ք.հ. III դ.
Պոնտոսի արշաւանքը Վիրք և Կոլքիս (Ք.ա. 65 թ. 1-ին կես)
Պոնտոսի արշաւանքը Ալուանք (Ք.ա. 65 թ. 2-րդ կես)
Կաբալակա
Սրանի
Բոլորելիր
ՔԱՐԹԼԻ ԽՈՒՆԴՔ
(Խիժ)
(Զբանն)
(Թելքեր)
Սարդրա
Մայրաքաղաքներ
Այլ բնակավայրեր
Ամրոցներ
Երկրամասեր, գաւառներ
Ցեղեր, ազգաբնակներ
Միջնադարյան և ժամանակակից անվանումներ
Պարսկական և այլ անվանումներ զրչական վրիպակների արդյունքով
Ճանապարհների փարեր
Ծանոթություն.
Ալուանքը և Վիրքը, որպես նեղագաւ քաղաքորդություններ, Ք.ա. I դ. 1-ին կեսին մերձ են Տիգրան Բ Մեծի փարթության մեջ
Դարբանդ
Գանձակ
Գեղարքունիք
Գեղամա լեռներ
Գեղարոտ
Գեղարքունի
Գեղարդ
Գեղարդաբերդ
Գեղարդանոց
Գեղարդանք
Գեղարդանքի ծոր
Գեղարդանքի գաւառ
Գեղարդանքի գաւառակ
Գեղարդանքի գաւառակներ
Գեղարդանքի գաւառակներ
Գեղարդանքի գաւառակներ